

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ,
ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ»
(Թիւ 1)

ՃԱՆՉՆԱՆՔ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2026

ՀՐԱՄԱՆԱԻ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՔՐՈԶՍ
ՍՈՆԱՅԻՆ ՍՈՅՆ ԳՐՔՈՅԿԻՆ
ԾԱԽՍԸ ՀՈԳԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՃԱՆՉՆԱՆՔ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

1) Ո՞վ է Սուրբ Հոգին

Սուրբ Հոգին՝ Սուրբ Երրորդության անձերէն կամ դէմքերէն մին է: Համագոյ [Coexistent] է Հօրը եւ Որդիին: «Համագոյ» բառը որ Գրաբարեան է, կազմուած է երկու բառերէ՝ «համա» եւ «գոյ»: «Համա» կը նշանակէ՝ «համատեղ, միասին, նոյն», իսկ «գոյ» կը նշանակէ՝ «գոյութիւն ունեցող»: Այս առումով, «համագոյ» կը նշանակէ՝ «միասին գոյութիւն ունեցող», կամ «համատեղ գոյութիւն ունեցող»: Օրինակ, երբ կ'ըսենք՝ «Սուրբ Հոգին հա-

մագոյ է Հօրը եւ Որդիին», կը հասկնանք թէ Սուրբ Հոգին յաւիտենական է, որ կը նշանակէ՝ ի յաւիտենից Հօրը եւ Որդիին հետ գոյութիւն ունի միաժամանակ: Չկա՛ր ժամանակ երբ Սուրբ Հոգին չկար: Ան մի՛շտ եղած է Հօրը եւ Որդիին հետ միասին ու միաժամանակ: Սուրբ Հոգին՝ Հօրը եւ Որդիին հետ համաբուն է: «Համա» կը նշանակէ՝ «համատեղ, միասին, նոյն», իսկ «բուն» կը նշանակէ՝ «բնոյթ, բնութիւն, էութիւն»: Այս առումով երբ կ'ըսենք՝ «Սուրբ Հոգին Հօրը հետ համաբուն է», կը հասկնանք որ անոր հետ նոյն աստուածային բնութիւնը ունի:

2) Յիսուսի կողմէ Սուրբ Հոգիին յիշատակութիւնը երրորդ կարգի վրայ («Ջանոնք մկրտեցէք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով» Մտ 28.19), ցոյց չի տար թէ Սուրբ Հոգին նուազ կամ նուաստ է քան Հայրն ու Որդին:

Եթէ Սուրբ Հոգին նուազ կամ նուաստ ըլլար քան Հայրն ու Որդին, Որդին երբեք անոր անունը պիտի չդնէր Հօրը անունին եւ իր անունին կողքին: Սուրբ Հոգիին անուան յիշատակութիւնը Հօրը եւ Որդիին անուններուն հետ միասին ինքնին ապացոյց է թէ Սուրբ Հոգին Հօրը եւ Որդիին հետ մէկ է

ու հաւասար եւ համապատիւ, եւ
աստուածային նոյն բնութիւնը ու-
նի: Այլ տեղեր կարգը շրջուած կը
տեսնենք՝ Սուրբ Հոգի, Որդի եւ
Հայր (Յհ 15.26, 16.14-15: Ա.Կր
12.4-6: Եփ 4.4-6, 5.18-20: Եբր 9.14),
եւ սա ցոյց կու տայ անոնց կա-
տարեալ հաւասարութիւնը: Նաեւ
ուշադրութիւն դարձնենք որ Մտ
28.19-ին մէջ Յիսուս «անունով»
կ'ըսէ եւ ո՛չ թէ «անուններով»: Եր-
րորդութեան անձերուն համար
«անուն» բառին եզակի ձեւով գոր-
ծածութիւնը ոեւէ կասկած չի թո-
ղուր Երրորդութեան անձերուն
հաւասարութեան մասին:

3) Սուրբ Հոգին որմէ՞ կը բղխի:
Միայն Հօրմէ՞ն, թէ նաեւ՝ Որդիէն:

Համաձայն Աստուածաշունչին
Սուրբ Հոգին կը բղխի Հօրմէն.
*«Երբ գայ Միսիթարիչը, այսինքն
Սուրբ Հոգին, որ ես ձեզի պիտի
դրկեմ Հօրմէն, որովհետեւ Հօրմէն
կ'ելլէ, անհկա ճշմարտութիւնը պի-
տի պատմէ եւ վկայէ իմ մասիս»*
(Յե 15.26): Աստուածաշունչին մեջ
վկայութիւն մը չկայ որ ըսէ թէ
Սուրբ Հոգին Որդիէն ալ կ'ելլէ կամ
կը բղխի: Որդին կրնա՛յ Սուրբ Հո-
գին տալ, դրկել, պարզել, բայց
գայն չի բղխեցներ, այլ՝ Հօրմէն
կ'առնէ ու կը դրկէ (Գրծ 2.33):

4) Մէկը կը հարցնէ. «Եթէ Որդին ամենակարող է, ինչո՞ւ պիտի չկարենայ Սուրբ Հոգին բղխեցնել իր անձէն»:

ա) Նախ ըսեմ, թէ Եկեղեցին չի գործածեր «չի կրնար բղխեցնել» բառերը, այլ՝ «չի բղխեցներ»: Տարբեր բան է ըսել թէ Աստուած այս կամ այդ բանը «չի կրնար» ընել, եւ տարբեր բան՝ թէ Աստուած այս կամ այդ բանը «չ'ըներ»: Օրինակ, Աստուած եթէ ուզէ արդար մարդը դժոխքի դատապարտել՝ կրնայ, բայց չ'ըներ այդպիսի բան: Ո՛չ թէ չի կրնար ընել, այլ՝ չ'ըներ: Հետեւաբար, երբ կը խօսինք Որդիին

մասին, պետք չէ ըսենք «չի կրնար բղխեցնել» Սուրբ Հոգին, այլ «չի բղխեցներ», որովհետեւ ասիկա կատարելը յատուկ է միայն Հօրը:

բ) Իսկ եթե մեկը պիտի տրամաբանե՞ թե՛ Որդին ամենակարող է, ուրեմն՝ պե՛տք է կարենայ Սուրբ Հոգին բղխեցնել, տրամաբանութեան նոյն ձեւը որդեգրելով կը պատասխանեմ. *«Հայրն ալ ամենակարող է, ուրեմն, պե՛տք է կարենայ ծնիլ իր Որդիէն»*: Բայց քանի Հայրը չի ծնիր կամ «չի կրնար ծնիլ» իր Որդիէն, ուրեմն՝ կը դադրի՞ ամենակարող Աստուած ըլլալէ: Յստակ է թէ ոչ: Ուրեմն, Որդին եւս որ Սուրբ Հոգին չի բղխե-

ցըներ, չի նշանակեր թե ամենակարող Աստուած չէ:

գ) Աստուածութեան անձերէն իրաքանչիւրը իր դիրքը ունի աստուածութեան մէջ: Հայրը աղբիւրն է թէ՛ Որդիին եւ թէ՛ Սուրբ Հոգիին: Որդին ու Սուրբ Հոգին Հօրմէն իրենց ծնելուն ու բղխելուն համար՝ Հօրմէն ստորադաս չեն նկատուիր, եւ ո՛չ ալ Հայրը անոնց ծնունդ ու բղխում տալուն համար՝ անոնցմէ աւելի գերադաս կը նկատուի: Հօրմէն ծնած Որդին՝ Հօրը հաւասար է եւ Հօրը նման ամենակարող է, եւ ոչինչով նուազ է քան Հայրը: Հօրմէն բղխող ու Որդիին ձեռքով տրուող Սուրբ

Հոգին ալ՝ ամենակարող Աստուած է, եւ ոչինչով նուազ է քան Հայրը կամ Որդին:

5) Ի՞նչ է Սուրբ Հոգիին դերը մեր փրկութեան մէջ:

ա) Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրը ունի իր դերը մեր փրկութեան մէջ, բայց սա չի նշանակեր թէ անոնք անջատաբար կը գործեն: Անոնք միասնաբար ու միատեղ կը գործեն, եւ կը գործեն մէկ եւ նոյն նպատակին համար՝ որ մարդուն փրկութիւնն է:

բ) Ոտոնս առաքեալ կ'ըսէ. *«Յաւիտենական Հոգիին միջոցաւ*

Քրիստոս ինքզինքը որպէս անարատ Ձոռ Աստուծոյ մատուցանեց»
(Եբր 9.14): Հոս ունինք Հայրը՝ որ Ձոռը ընդունողն է. ունինք Սուրբ Հոգին՝ որուն միջոցաւ Ձոռի մատուցումը տեղի կ'ունենայ. եւ ունինք Որդին՝ որ նոյնինքն զոռնուողն է: Մեր փրկութեան համար անհրաժեշտ են երեք բաներ՝ Ձոռը, Ձոռը մատուցանելու միջոցը, եւ Ձոռը ընդունողը, եւ երեքն ալ կը գտնենք տուեալ վկայութեան մէջ:

գ) Աստուծոյ կամքը մեզ միայն փրկելը չէ, այլ նաեւ՝ սրբագործելն ու փոխակերպելը: Իսկ մեզ սրբագործելն ու Աստուծոյ պատկերին փոխակերպելը Սուրբ Հոգիին դերն

է (Բ.Կր 3.18, 5.5): Այլ բացատրութեամբ մը, Հայրը կամեցաւ մեր սրբուիլը, Որդին սրբեց, իսկ Սուրբ Հոգին կը սրբագործէ մեզ: Մարդը կը սրբուի իր մեղքերէն երբ ճշմարիտ ապաշխարութեամբ Քրիստոսի կը դառնայ. որմէ ետք կը սկսի մարդը սրբագործելու աշխատանքը, որ Սուրբ Հոգին ինք կը կատարէ: Սրբուիլը Քրիստոսի արիւնով տեղի կ'ունենայ, իսկ սրբագործուիլը՝ կեանքի նեղութեանց ու փորձութեանց ընդմեջէն կ'իրագործուի, եթէ Սուրբ Հոգիին օգնութեամբ ու տուած համբերութեամբ տարուին:

դ) Հայրը մեզ սիրեց եւ ուզեց որ Աստուծոյ որդիներ կոչուինք (Ա.Յհ 3.1): Որդին իշխանութիւն տուաւ մեզի Աստուծոյ որդիներ կոչուելու (Յհ 1.12): Իսկ Սուրբ Հոգին մեզ որդեգրեց Աստուծոյ (Հո 8.23): Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մե՛կ նպատակ ունին՝ մարդը Աստուծոյ զաւակ դարձնել:

ե) Հայրը խոստացողն է երկնային ժառանգութեան (Գղ 3.29, 4.7: Յկ 2.5): Որդին պարգեւիչն է այդ ժառանգութեան (Ա.Թս 5.9: Եփ 1.11): Իսկ Սուրբ Հոգին գրաւականն է թէ պիտի ժառանգենք երկնային այդ ժառանգութիւնը (Բ.Կր 1.22: Եփ 1.14):

6) Ինչո՞ւ համար Յիսուս կ'ըսե որ եթե մեկը Մարդու Որդիին դեմ խօսի՝ Աստուած պիտի ներե անոր, բայց Սուրբ Հոգիին դեմ խօսողին, եւ անոր հայհոյողին, այլ խօսքով՝ նախատողին, պիտի չներե (Մտ 12.31-32: Մր 3.29):

Փարիսեցիները ե՞րբ նախատեցին Յիսուսն ու Սուրբ Հոգին. նախատեցին երբ յայտարարեցին թէ *«անհկա դուերու իշխանին՝ Բէեղզերուդին զօրութեամբ է որ դուերը դուրս կը հանէ»* (Մտ 12.24): Իսկ Յիսուս դուերը ի՞նչպէս դուրս կը հանէր. *«Աստուծոյ Հոգիի՛ն զօրութեամբ չար ոգիները*

դուրս կը հանէր» (Մտ 12.28): Այս ատումով, Սուրբ Հոգիին կատարած գործը՝ Փարիսեցիները վերագրեցին դեւերու իշխանին՝ Բեւեղերուդին՝ Սատանային, եւ այս ձեւով, անոնք Սուրբ Հոգին Սատանայ կոչած եղան, եւ ճիշդ այս էր որ աններելի մեղք համարուեցաւ իրենց: Անոնք Յիսուսը Սատանայ չկոչեցին, այլ՝ Սուրբ Հոգին, որուն միջոցաւ Յիսուս չար ոգիները դուրս կը հանէր: Փարիսեցիները կասկածով կը նայէին Յիսուսին, որովհետեւ չէին կրնար հասկնալ թէ ի՛նչպէս Աստուծոյ Որդին դարձաւ Մարդու Որդի. չէին կրնար հասկնալ թէ Մար-

իամի ու Յովսէփի Որդին ի՞նչպէս
կրնար Աստուծոյ Որդի ըլլալ, եւ
կը գայթակղէին. Յիսուս գիտէր
այս իրողութիւնը, ահա թէ ինչու
քիչ մը իրաւունք տուաւ անոնց
երբ ըսաւ որ Մարդու Որդիին
հայեոյողին ներում կայ, բայց
բնա՛ւ իրաւունք չտուաւ անոնց
Սուրբ Հոգին նախատելու, քանի
իրենք պէ՛տք էր ճանչցած ըլլային
Սուրբ Հոգին եւ անոր գործը: Ան-
շուշտ ներկայիս տարբեր է պա-
րագան. մենք գիտենք թէ ո՛վ է Յի-
սուսը, եւ գիտենք թէ ան մեր փրը-
կութեան համար մեռաւ. եւ ուստի
անոր չհաւատալը՝ դատապար-
տութիւն կը բերէ մեր վրայ:

7) Ի՞նչ եղաւ Սուրբ Հոգիին դերը եկեղեցոյ կեանքին մէջ, աւետարանչութեան գործին մէջ:

Քրիստոս իր ուսուցումներով եւ արիւնով հիմնեց իր եկեղեցին, իսկ եկեղեցոյ տարածումը՝ Սուրբ Հոգիին գալուստով եւ անոր առաջնորդութեամբ իրականացաւ: Առաքելական բոլոր նամակները կը խօսին Քրիստոսի եկեղեցիին տարածման մասին, բայց հիմնականօրէն Գործք Առաքելոց գիրքն է որ ատիկա շատ յստակ կերպով ցոյց կու տայ: *«Գործք Առաքելոց գիրքը՝ Սուրբ Հոգիին գիրքն է»*, պիտի ըսէր Զարեհ Արք. Ազնա-

տրեան: Գործք Առաքելոց գիրքին մէջ Սուրբ Հոգին է որ կը տարածէ Քրիստոսի փրկութեան Աւետարանը, ինքն է որ կը ղեկավարէ, կ'առաջնորդէ, կը ղրկէ, կը կոչէ, կը խօսի, կը յայտնէ, կը զօրացնէ, կ'օգնէ: Կը կարդանք թէ ինչպէս Յիսուս առաքեալներուն Սուրբ Հոգիի մկրտութիւն խոստացաւ (Գրծ 1.5), եւ թէ ինչպէս երբ անոնք Սուրբ Հոգին ստացան՝ զօրութեամբ լեցուեցան եւ Տիրոջ վկաները դարձան ամբողջ աշխարհին մէջ (Գրծ 1.8, 2.2-4): Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներուն գրլխաւորութեամբ երբ խումբ մը հաւատացեալներ կ'աղօթէին՝ «*հա-*

*ւարատեղին շարժեցաւ, եւ բոլորը
Սուրբ Հոգիով լեցուեցան եւ
սկսան համարձակ կերպով Աս-
տուծոյ խօսքը քարոզել» (Գրծ 4.31):
Պետրոս առաքեալ խօսելով Յի-
սուսի յարութեան եւ անոր Առաջ-
նորդ ու Փրկիչ ըլլալուն մասին՝
կ'ըսէ. «Այս իրողութիւններուն
վկաներն ենք մենք, ինչպէս նաեւ
Սուրբ Հոգին» (Գրծ 5.32): Սուրբ
Հոգին ինքն է որ Փիլիպպոս սար-
կաւագին կը պատուիրէ մօտենալ
Եթովպիացի ներքինիին, եւ առաք-
եալը կը մօտենայ եւ անոր կ'աւե-
տէ Յիսուսը եւ ներքինին քրիս-
տոնեայ կը դառնայ ու կը մկրտուի
(Գրծ 8.29, 35-39): Ղուկաս կը վկա-*

յէ, թէ *«Սուրբ Հոգիին օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիրդ կ'ապրեին»* (Գրծ 9.31): Սուրբ Հոգին ինքն է որ կը դրկէ Պետրոսը Կոռնելիոսի տունը. առաքեալը կ'երթայ ու կ'աւետէ Քրիստոսը եւ բոլորը քրիստոնէայ կը դառնան եւ կը մկրտուին (Գրծ 10.19-20, 44-48): Բառնաբաս Սուրբ Հոգիով եւ հաւատքով լեցուն ըլլալուն համար՝ *«մեծ բազմութիւն մը հաւատաց Տիրոջ»* (Գրծ 11.24): Անտիոքի մէջ, Ագաբոս անունով մարգարէ մը Սուրբ Հոգիէն թելադրուած՝ մարգարէութիւն կ'ընէ (Գրծ 11.27-28): Կը կարդանք թէ ինչպէս Սուրբ

Հոգին կը պատուիրէ ուրիշներուն՝
ըսելով. *«Տրամադրեցէ՛ք Բառնա-
բասն ու Սողոսը այն գործին՝ ո-
րուն կոչած եմ զիրենք»* (Գրծ 13.2):
Քիչ մը անդին կը կարդանք. *«Բառ-
նաբասն ու Սողոսը Սուրբ Հոգիէն
դրկուած՝ իջան Մելեկիա, եւ հոն-
կէ դէպի Կիպրոս նաւեցին»* (Գրծ
13.4): Հետեւեալ վկայութիւնը կը
պարզէ թէ առաքեալները իրենց
կատարած աւետարանչութեան
մէջ Սուրբ Հոգին ունեին իբրեւ
մնայուն գործակից ու գործատէր.
*«Սուրբ Հոգին եւ մենք յարմար
դատեցինք՝ ձեզ չծանրաբեռնել
ոեւէ ուրիշ պահանջներով, բացի
հետեւեալ կարեւոր բաներէն...»*

(Գրծ 15.28): Կը կարդանք Եփեսացիներու մասին որոնք Յիսուսի անունով մկրտուեցան եւ Սուրբ Հոգին ստացան (Գրծ 16.5-6): Պօղոս առաքեալ կը վկայէ թէ «Սուրբ Հոգիին մղումով» Երուսաղէմ գնաց (Գրծ 20.22-23): Սուրբ Հոգին է որ տեսուչ կը կարգէ ու հովուութեան կը կանչէ մարդիկը (Գրծ 20.28): Յիշուած վկայութիւնները Գործք Առաքելոցին մէջ միակ վկայութիւնները չեն Սուրբ Հոգիին մասին. կան այլ բազմաթիւ ակնարկութիւններ (Գրծ 1.2, 16, 2.17-18, 33, 38, 4.25, 5.3, 9, 6.3, 5, 10, 7.51, 55, 8.15-19, 9.17, 10.38, 11.12, 15-16, 13.9, 52, 15.8, 16.6-7, 19.2, 21.4,

11, 28.25): Բոլոր վկայությունները մեկ բան յստակ ցոյց կու տան, թե Սուրբ Հոգին էր որ ծաւալեց ու աճեցուց Քրիստոսի եկեղեցին, Սուրբ Հոգին էր որ առաքեալները աւետարանչութեան կը մղէր: Այսօր եթէ երբեք աւետարանչութիւն չունինք, պատճառն այն է՝ որովհետեւ Սուրբ Հոգին չունինք:

8) Ի՞նչ է Սուրբ Հոգիին դերը մեռելներու առաջին եւ մեռելներու երկրորդ յարութեան մեջ:

Սուրբ Հոգին է որ կը կատարէ մեռելներու առաջին յարութիւնը, եւ ինքն է որ պիտի կատարէ մե-

ռելներու երկրորդ յարութիւնը: Մեռելներու առաջին յարութիւնը՝ մարդուն վերստին ծնունդն է, այլ խօսքով՝ մեղքէն ձերբազատելով՝ իր մեռած հոգիին կենդանացումն է, եւ սա տեղի կ'ունենայ Սուրբ Հոգիին միջոցաւ (Յհ 3.3-8: Հո 7.6, 8.2, 10, 11, 13: Բ.Կր 3.6: Գղ 5.25): Իսկ մեռելներու երկրորդ յարութիւնը՝ մարմնաւոր յարութիւնն է, որ տեղի պիտի ունենայ Տիրոջ երկրորդ գալուստին: Այս մասին Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝*

*պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահ-
կանացու մարմինները» (Հո 8.11:
Տե՛ս նաեւ՝ Յյտ 11.11: Եզ 37.14):*

9) Ի՞նչ է Սուրբ Հոգին դերը՝
մեզ մեղքէն ազատելու մէջ:

Սուրբ Հոգին ինքն է որ կը յայտնէ
մեզի մեր մեղքերը ու մեր մեղքե-
րուն զգուելիութիւնը, եւ յայտնելէ
ետք՝ ինքն է որ մեղքի ու մեր մե-
ղաւորութեան գիտակցութիւնը
կ'արթնցնէ մեր մէջ ու մեզ կը հա-
մոզէ որ քաւութեան ու փրկութեան
կարիքը ունինք: Իսկ երբ համոզ-
ուինք որ քաւութեան ու փրկու-
թեան կարիքը ունինք՝ մեզ կ'ա-

ռաջնորդէ մեղքերու քաւիչ՝ Քրիստոսի մօտ. *«Սուրբ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն»* (Հո 8.2): Եթէ Քրիստոս մեր մօտ տեսնէ անկեղծ զոջում ու ապաշխարութեան արցունք՝ կը քաւէ մեր մեղքերը:

10) Քրիստոսով մեր մեղքերէն քաւուելէ ետք՝ ի՞նչ կ'ըլլայ Սուրբ Հոգիին յաջորդ քայլը:

Մեղքերու քաւութիւն ձեռք ձգելէ ետք, Սուրբ Հոգին կը սկսի օգնել մեզի որ սպաննենք մեր մեղքե-

րը. «Եթէ Սուրբ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք» (Հո 8.13): Յիսուս կը քաւէ մեր գործած մեղքերը, բայց մեղքին սերն ու արմատը մեր ներսիդիէն արմատախիլ ընելը՝ Սուրբ Հոգիին գործն է: Այո՛, Սուրբ Հոգին է որ մեղքի սերը կը վերցնէ մեր մեջէն ու Քրիստոսի սերը կը դնէ: Սուրբ Հոգին է որ կ'ազատէ մեզ մեր մոլութիւններէն (Հո 8.9, 13: Գղ 5.16) ու կը զարդարէ առաքինութիւններով (Գղ 5.22-23: Ա.Թս 1.6): Մէկ խօսքով, Յիսուս կը սրբէ մարդուն մեղքերը, բայց սրբուած մարդը առաքինի դարձնողը Սուրբ Հոգին է:

11) Ի՞նչ կ'ընէ Սուրբ Հոգին մեզի սէրը մեզմէ հեռացնելէ ու մեզ առաքիւնութիւններով զարդարելէ ետք:

Մեզ Աստուծոյ բնակարան կը դարձնէ (Եփ 2.22): Մեզ Աստուծոյ տաճար կը դարձնէ ու մեր մէջ կը բնակի (Ա.Կր 3.16, 6.19: Հո 8.9, 11: Բ.Կր 6.16: Եբր 3.6): Կը լեցնէ մեզ (Եփ 5.18: Փլպ 3.3), եւ մեզ Աստուծոյ սուրբ ժողովուրդը կը դարձնէ (Բ.Թս 2.13), եւ կը սորվեցնէ միացած մնալ Քրիստոսի (Ա.Յհ 2.27): Կեանք կու տայ մեզի (Յհ 6.63: Հո 8.10: Բ.Կր 3.6: Գղ 3.3), եւ մեզ Քրիստոսի սեփականութիւնը կը

դարձնե՛ (Հո 8.9): Մեզ Աստուծոյ գաւակ կը դարձնե՛ (Հո 8.15-16), եւ կը կնքե՛ փրկութեան համար (Եփ 4.30): Այս բոլորէն ետք, յաւիտենական կեանքը ժառանգելու ապահովութիւն ու վստահութիւն կուտայ մեզի (Բ.Կր 1.22: Եփ 1.14): Երբ լեցուինք փրկութեան վստահութեամբ, Սուրբ Հոգին կը սկսի աշխատիլ մեր կեանքը փոխակերպել այնպիսի ձեւով մը որ Տիրոջ փառքը արտացոլացնենք (Բ.Կր 3.18, 5.5): Եւ այս բոլորին վրայ, մեր սիրտը ուրախութեամբ ու խաղաղութեամբ կը լեցնե՛ (Հո 14.17), սպասելով որդեգրութեան ցանկալի պահուն (Հո 8.23):

12) Ուրիշ ի՞նչ կ'ընէ Սուրբ Հոգին:

Կը նորոգէ (Հո 7.6):

Կ'առաջնորդէ (Հո 8.14):

Կ'օգնէ (Հո 8.26: Ա.Կր 2.15):

Կը բարեխօսէ (Հո 8.26-27):

Պարզեւներ կու տայ (Ա.Կր 12.8-10):

Կ'արդարացնէ (Բ.Կր 3.9):

Կ'ամրապնդէ (Եփ 3.16):

Միութիւն կը շնորհէ (Եփ 4.3):

Աղօթել կը սորվեցնէ (Եփ 6.18):

Կը ներգործէ (Ա.Թս 1.5):

Յաղթել կու տայ (Բ.Տմ 1.7):

Կը վերանորոգէ (Տիտ 3.5):

Կը սրբէ (Ա.Պտ 1.2: Հո 15.16):

Կը մխիթարէ (Յհ 14.26, 15.26):

Մեզի հետ կը մնայ (Յհ 14.16):

Կը խօսի մեր միջոցաւ (Մր 13.11):
Կը սորվեցնէ սիրել (Կդ 1.8):
Պտուղներ կու տայ (Գդ 5.22-23):
Կը սորվեցնէ (Յհ 14.26: Ա.Յհ 2.27):
Ազատութիւն կու տայ (Բ.Կր 3.17):
Կրակի պէս է մեր մէջ (Ա.Թս 5.19):
Կը հանգչի մեր վրայ (Ա.Պտ 4.14):
Հաղորդակից կ'ըլլայ (Եբր 6.4):
Հաղորդակից կը դարձնէ (Փլպ 2.1):
Մեզի տրուած Սուր է (Եփ 6.17):
Առնենք այս Սուրբը (Յհ 20.22):
Կը յիշեցնէ Յիսուսի խօսքերը
(Յհ 14.26), կը վկայէ Յիսուսի մա-
սին (Յհ 15.26), կ'առաջնորդէ ամ-
բողջական ճշմարտութեան (Յհ
16.13), եւ խոստովանիլ կու տայ
Յիսուսը (Ա.Կր 12.3):